

24203

«Ты аты»

891-99

U-58

1912

24-0

ՍԿԱՆԴԻՆԱՎ

157

ՄԻՐ ԹԻՖԼԻՋԻ ԱՂԶԿԵՐԱՆՑ

„ՊԻԿՆԻԿԸ“

ՕՐԹԱՃԱԼՈՒՄ

(ՔՈՌ-ՄԻՐՕԻ ԲԱՂՈՒՄԸ)



291.99
U-58

ԹԻՖԼԻՍ

Արագածիկ «Էսպերանս» Նիդաւեախակայա № 17

1912

2003

1960
" 212436 " 107492 - 11-23

U 4 U. 6-7 U. P- 72 *42*

1912

13, 42, 20, 18, 16

ՄԻՐ ԹԻՖԼԻԶԻ ԱՂԶԿԵՐԱՆՑ

891.99

U-58

58
ህግ ስር ስር

ORÞULUNHVR

(**ՔՈՌ-ՄԻՐՈՒ ԲԱՂՈՒՄԸ**)

(Պատահած անցք)

Խօսկը պիկնիկն է կարգացող,

Արի մէ թամաշա արն.

Աղջկերքը ինչ քէֆու մնին,

Տաշի ածա ու խնդարա:



Արագածի պալատում ընկալվելով

1912

ԱՂԱԿՆԵՐԱՆՑ «ՊԻԿՆԻԿԸ»

Հոռ Միրոսի բաղումը

1

Անշտի հասանք մայիս ամսին,
 Վախտն է պիկնիկները սարքիմ,
 Վուրդի վուր է Բեչէն գուքայ,
 Լաւ փիքը անինք բանը կարգիմ:

Ոչով հիշա բան չը գիդենայ,
 Միր պիկնիկի սարք գցիլը.
 Մարթ պիտի խերխի ունենայ,
 Դժար գուրձէ գուլի բերիլը:

Էրէգ Շաշինկէն ինձ մօդ էր,
 Էկողներուն զիւր գրեցինք,
 Վուրդի կուլի ում բաղումը,
 Բաղն ու խէրվանը վճռեցինք:

Մարթա գուլի իրիք մանէթ,
 Ով որ գուքայ պիտի վուր տայ.

Ամենքին էլ իմաց կոնինք,
Ինչ տիղ կուլինք, վուր էնդի գայ:

Սազանդրի շաբաշն էլ ջուգէ,
Իրիք մանէթից սավայի.
Թէ ցխրա, ասոնաս կու խաղան,
Ինձ ջուգ կու հասնի հաւայի:

Սազանդարնիր կանչած ունինք,
Վուր եանդիշ չին գայ խաղումը.
Տիղն էլ թահնայ ջոգած ունինք,
Չին Քոռ-Միրօի բաղումը:

Էրգէն սուփրէն գցած կուլի
Ջրի դրաղին կակլի տակը,
Բաց սուլօ-գուլօ ուզենաս
Կուլի թամուղ ու խտակը:

Թէ վուր մէ բան պակաս ըլի,
Ինչ կու պրծնիմ նրանց ձեռնեմէն.
Խոմ գիղիք պրուծի կու գցին,
Քիբս գուքան ամէն կռնեմէն:

Գլուխը քարը լաւիր կառնիմ,—
Ժիակայ դոնի-գուրգիւլը,

Քամոնից կու վիկալնիմ,
Վուր չը տայ ցածրն ու անգալը:

Ձեզվելովը խափւն մարթ է,
Նրան մաւայ իս չիմ գնայ,
Հուտած փթած ձգնիր ունէ,
Թնղ էնդունք իր համա մնայ:

II

Հօրէս Շաշինկէն էլ էկաւ,
— Բարով տեսայ իմ Շաշինկայ,
Թագա խաբար գիղիմ կօսիս
Ինչին խօսում, կամ թէ ինչ կայ:

Քայ ինչ չունիմ 'իս ասելու,
Արի մէ կոնչինայ խաղանք,
Շատ բան ունիմ 'իս խօսելու,
Ձէր վախտ չունիմ, ջէր քէֆի գանք..

Էրկուսը միասին նստեցան,
Սկսեցին թուղա խաղալը,
Ձիբից սիպտակ փուղ հանեցին,
Ու սկսեցին փուղ վերգալը:

Խաղումին ու հիգը խօսում,
Ու բաց էլաւ մասլահաթը,
Պիկնիկի վրա էր խօսիլը,
Միտ բերին վաղուցվայ աղաթը:

Դրիք մանէթ քա, ով չի տայ,
Ուտէ, խմէ ու քէֆ անէ...
Սաղ օրով բաղումը ման գայ,
Թղտումնէլ փուղիւրը տանէ:

Էգուց գնայ իմաց արա,
Գզիր-Բեթօինց Խամփերուն.
Նա դիփունին իմաց կօնէ,
Միւր դարդիմանդ աղջիկներուն:

III

Էս խօսելում Շամդան-Լիզէն,
Խիստ դովթալաբ նի տուն պրծան...
Սրանց միտքը դիփ իմացաւ,
Փուղ վեր գալուն դարուկ կացաւ:

— Անպատճալ իս էլ գուքամ,
Դս չուլս մանէթ փուղ կու հանիմ,

Ավտանբիլով դեվել գուքամ,
Էգեր էնդի փուղիլ տանիմ:

Շաշինկէն իր խաղը էթող,
— Գուղիք թագայ խաբար ասիմ,
Մէ ուցնաուր բան իմացայ
Զիմ դնջանայ թէ վուր չասիմ:

Բօշա Մոսէսինց հարս Այոն,
Նրա մօդ էի խիստ ջգրած է,
Պիկնիկի համա խօսք գցեցի,
Ուար չասաւ, բայց տխրած է...

— Քա, մէ ասա, ի՞նչի համա,
Նա խոմ լաւ Խիթարիչ ունէ
Ի՞նչն է պակաս սիւ սրտովին
Մէ ինձ ասա, ի՞նչ դարդ ունէ:

— Բանը էնէ Խիթարիչը
Նրան էթող կնիկ ուզից
Առանց մուլի քէբին կտրից
Էլ նրա մօդ ապրիլ չուզից:

Այոն շատ վիրուկիրէ թռի,
Գնացած բանին ի՞նչ կու օտկէր.
Էրևում է խիստէ էրի,
Զգրեմէն խիլքի վրայ չէր:

Կաճկաճը բլբուլ է դառի,
Հիմի ուրիշ վարթ է սիրում,
«Այոին» տխրած է թողի,
Առանց կրակ սիրտն է էրում:

Հիմի ամէն տիղն է գնում,
Վուր սրտի փխցուկը հանէ.
Ջգրու էլ տանը չէ մնում,
Դուն ինձ ասա, բաս ի՞նչ անէ:

Շաշինկաջան էտ ի՞նչ ասիր,
էտ բանը խիստ դժուար բան է,
Իմ գլխին էլ շատ է եկի,
Գէղինը պատուվի դեպէ՛ր տանէ...

Է՛հ ջահանգամը նրանց գլուխը,
(Մէ իմաթվիս արա մցխելայ).
Արի մինք միր բանը խօսինք,
«Բվաս իխալօն թավի դվելայ»...

Ասաւ Լիզէն ճամփու եղի,
Շաշինկին ու Շամդան Լիզին,
Ինչ վուր տարաւ, տանուլ էրիդ
Մտիկ չարաւ նա իր քիսին:

IV

Մէկէլ օրը Խամփերու մօտ,
Ափալ—թափալ տունը մտաւ,
Էկողներու սիէն էրիդ
Անումնիրը մէ մէկ ասաւ...

— Խամփերի ջան, ջափա քաշէ,
էտ դիփունին իմաց արա,
Դուն էլ էնդի իմ դոնադնիս,
էտու համա դարդ մի արա:

— Ումնից էլ վուր փուղիր առնիս,
էս թղտումը ձեռք քաշիլ տու,
Ամենքը քիզ մաւայ կեհան,
Իմ մըհուրը իրանց շանց տու:

Ասա քոռ Միրօի բաղում,—
Միր «պիկնիկը» էնդի կուլի,
էլ խնդրիլ, մնողրիլ չուզենան,
Ամէն բանը կարգին կուլի...—

Խամփերուն վուր ճամփու եղի,
Գնաց լաքիէք բռնելու,

էնդանց «Սէվանի» մօտ կեհա,
Աման չաման քրիհեղու:

V

Հիմի ասիմ էն սիումը,
Ուկքիւր էին զոնաղնիւրը,
Դիփ դարդիմանդ աղչկիւրքին...
«Պիկնիկումը» էկողնիւրը:

Մէկն էր «զազրանիցինց Նինօն»,
Ու քոսա «Նիկոլինց—Օլէն»,
«Քեչայ—Շաշինկէն» խոմ կուլի
Զորորդն էր «ծիպլիան—Սօնէն»:

Հինգերորդը Շախտի Սօնէն,
Վեցերորդը հոպլա—Մաշօն,
Եօթերորդը կլեկած Անէն,
Ութերորդը դամբուլ Շաշօն

Իներորդը Մալաքինց Կատօն,
Ու Կոստօի կնիկ Մաշինկէն,
Մեկնէլ Կարսուկանինց Նատօն,
Ու խաթաբալինց—Շաշինկէն:

Մոռացայ Ենգոինց—Անանին,
Ու Մազմանինց Փեփելը.
Կանչած ունէին Բուղդանին
Ու միւր պուճախինց Կեկելը:

Սուլիկօի կնիկ Փեփելը,
Շամդան—Լիզի հիզը զնաց
Զոփկա—Թալալըն ու մէկելը...
Էլ օչոուն նա չը մնաց:

VI

Դաստաբաշին ամէն բանը,
Տուկոան-տուկրան կարգադրիլ էր,
Խորագ, ստուլիւր, աման—չաման,
Դրոգներով զիփ զրգիլ էր:

Լաքիէքը իրանց պարտքը,
Ամէն բանը սարք զցեցին.
Վունց վուր Լիզէն ասիլէր,
Ստուլերու վրայ սազացրեցին:

Պովերնէլ իր պարտքն էր կատարում
Փոթլի տօլմա էր պատրաստում,

Փլաւի բրինձը դրչած ունէր,
Հիդը հագումէր, օրշաճում:

Արդի շուշէն կշտին դրած,
Խամուշ—խամուշ կնկէր տալի.
Ու զէսուդէն անտղոտումէր,
ՌՎ էր գնում, ՌՎ էր գալի:

Շամզան Լիզէն ու Փեփեւը,
Մէ թահնայ տիղ նստիլէին.
Չարէ չար ցխրա էին խաղում,
Մէկ մէկուց փուղիւր տարիլէին:

Էրկու ստոլ էլ սուփրէն գցած,
Խաղալու համար էր պատրաստած,
Կալոդ թղտիւրը անբացանիլ,
Լօտօն, նարդէն կշտին դրած:

Չուախ—Լիզէն Բառբառի հիդ,
Քրտնաթաթախ բադն էկաւ,
Ամէն բանին մտիկ արաւ,
Խան զէս ննգաւ, խան զէն ննգաւ:

Լաքիէրուն դիփ կարքաղրից,
Պակաս բանիւրը դրստից,

Ամէն բանը իմաց արաւ
Կարք ու կանոնը հասկացրից:

Սազանդրի տիղն էլ նշնած էր,
Վուրդի պիտի նստիլ էին,
Նրանց էլ շուգ հասկացրիլ էր,
Թէ ինչ խաղիւր ասիլ էին:

Ղոնաղնիւրը դիփունք էկան,
Նստեցան խաղալու ստոլի մօտ,
Կալոդ թղտիւրը բացւեցան,
Անոն նստեցաւ «Կօլի» մօտ:

Սազանդրիւրը քաղցր ձէնով
Լաւ լաւ խաղիւր էին ասում
Շատն էլ խեղճումը սէիր անում
Իրանց դարդերիցը խօսում:

Շամզան Լիզէն սահար—սահրի,
Տասը մանէթ փուղ էր տարի,
Խէրվնումը սէիր էր անում,
Չեռնէ ձեռը փուղէր ճալի:

Ստոլի վրա մինձ կռիւ է,
Խաղը ատկազ է անում

Թղտիբը գետնով է տալի.
Զօնքի իրնից փուղին տանում:

Լիզէն շուտով մէջն է ննգնում,
Շախտի Սօնին խրատում է.
Ի՞նչ էլաւ քա, ի՞նչիս կատղի,
Նա թղտիբը պատրասնում է...

Ինչ է փուղիբ տանուլ էրիդ,
Իրիք թուման բանկի մէջը.
Էնքան փուղ չէր տանուլ աւի,
Իր օրումը, կեանքի մէջը...

Էս փուղիբը Քէչէն տարաւ,
Ու վիկացաւ զրադ քաշվեցաւ,
Շամզան Լիզի բարովն առաւ,
Սօնի արարքը խօսեցաւ...

Նրանց թողնինք իրանց հալում,
Լաքիէքը ինչին շինում
Կակաօ—սախրնի սուխարով
Դիփունին թաւազաին անում:

Մէ քանիսը թուխտ էին խաղում,
Վուրն նարզի էր գլորում,

Մէ քանիսը ցիւրա էին խաղում,
Շատն էլ բիխիրն էր օլօրում:

VII

Սահաթի իրիքը անց կուլէր,
Վուր նստեցան ճաշ ուտելու,
Լիզէն ճաշը պատրաստ ունէր,
Վուր չէր դառի նրանց ճօշալու:

Առաջ չխրթմէն մօդ էկաւ,
Իստակ թուշի գառնեմէն էր,
Զակուակեղէն ամէն բան կար,
Դիփ լի ու բօլ թանգեմենէր:

«Գզիր—Բէթօինց» Խամփերուն,
Սուփրում թամազա կարգեցին,
Վունց որ վուր կնգան վայելէ,
Սուփրի ստարշինա շոգեցին:

Աբա մէ տոնշ, կենաց իմ խմում,
«Միր կամպանիի կիճացը,
«Ամէն տարի էսօր հասնինք,
«Զը մոռանանք աղ ու —հացը:

Մրավալ ժամիէր երգեցին,
Հոպլա Մաշօն ու Շաշինկէն.
Միւսները դամէին քաշում,
Շաղին—Գրիշէն ու Օսինկէն:

Էսէնց կարգով կինացները,
Խամփերին բոլորին խմից,
Օչովու կենացը չեթող,
Ամենը կարքին թամամից:

Սագանդրի շաբաշ հաւաքեց,
Ամէնքը լաւ փուղիր տվին.
Շաշինկէն իրիք մանէթ էրիդ,
Տարած փուղիր շատ կար ձեռին:

Շախտի Սօնէն տաս շահի էրիդ,
Իրիք թուման փուղ տարվածէր.
Ջգրեմէն հաց էլ չը կերաւ,
Ուշկ ու միտքը խառնված էր:

Սահաթի վիցին խաղալ սկսվեց,
Լեզգեվար ու ուզունդարա,
Ու ովոր փուր լաւ էր խաղում
Մահլում էր ըլում աշքարա:

Միւր պովերը խիտ հարփիւ էր,
Հաւիցը մազա էր շինի,
Վուր իրան էլ մի բան բախշին,
Ան խմեցին մէ քիչ գինի:

Չորախ Լիզին շատ ջիզըն էկաւ
էլ չէր գիտում, թէ ի՞նչ անէ,
Թամազից փուղիր էր պահանջում
Ինքն տուեց—մաշ ի՞նչ անէ...

Պովրին մէ ֆանդով ըադ արին,
Իշի ախոռում քնեցրին.
Վրէն չուլ ու փալաս գցեցին
Անշախ, փուր նրան պառկեցրին:

Մէ կվարտի արադ էր խմի,
Ինչկու կերակուր կու հագրէր
Հաւ է, փուր խարաք չէր արի
Թէ չէ բանը խարաք կուրէր:

Պովրի գլխին աղին ածում,
Վուր չչփոթվի հանգստանայ, նրա
Բաղմնչուն նրա մօտ կանգնեցրին,
Վուր չը խիստվի, չը մնջանայ...



1001
3756

Աղչկիրքը քիբս էին գալի,
Լիզին, քոքուլա էին տալի.
Էս ճաշը դա վունց պատրաստից
Ձարմանք բանէ գարմանալի...

— Լաւ պովէր է, ի՞նչիք ասում,
Ճաշըս խօմ խարաբ չարաւ,
Ինձ մօտ պարզ էրէս դուս էկաւ
Դէ ջանդամը ի՞նչ վուրարաւ:

Դէ դաթար տու ի՞նչ վուր էլաւ,
Դրգէ ֆայտօննիր կանչիլ տու.
Ամէն բանը լաւ անցկացաւ.
Էս մէ մանէթ բաղմնչու տու:

«Այիոն» էր էս ասողը,
Շատ ջգրած էր չէր իմանում.
Լաւ օր չը տեսնէ էրողը,
Ձգրից վունչինչ չէր հասկանում...

Ինչկու աղչկերանց գնալը,
Պովերը հանգիստ քնեցաւ.
Իժ գարթեցաւ Լիզին հարցրուց,
Ձունքի Լիզից փուղ չը ստացաւ:

Բաղմանչին ումիկ էր տալի,
Կէհաս տանը Լիզէն կուտայ.

Գինի գուզիս ինձ մօտ շատ կայ,
Ու խորագնիր անհետաբ կայ:

Նստինք հիմի մինք քէֆ անինք,
Ձուրնա գուզիս կանչիլ կուտամ.
Ձրի ափը սուփրան գցինք
Թէ փուղ գուզիս իս փուղ կուտամ:

Ձրի դրաղին լաւ բաբաթի,
Ձուրնա—դուգուկով քէֆ արին,
Նրանց քէֆ քաղցը անցկացաւ,
Մէկ մէկու բեղամաղ չարին:

Էլ ինչ բանը էրգենացնիմ,
Կերան խմեցին ու կշտացան.
Մինձ շնորհակալութիւն ասելով,
Մէկամէկուց բաժանվեցան:

Պիկնիկը էսպէս վերջացաւ,
Ձուլիս Լիզէն լաւ խերվեցաւ.
Պովրին էլ իր փուղն էրիտ,
Ամէն գուրձից հանգստացաւ:

Գ. Ս.

Րիզիսպուրին, հարսնիքները,
Վաղուցվայ հանդարտութիւնը:

Հիմի խալիսը շատ դարդեցը,
Հէնց գիզենաս սիւ սգուրէ,
էս օրն ննգանք նամարդեցը,
Մեր քաշածը էս ի՞նչ օրէ...

Վատ բան արաւ բիւրօկրատը,
Սաղսաղ մորթեց ու շարտեց...
Ձեռքին առաւ սուր մկրատը,
Առանց ձկիլ մեղ կտրտեց:

1906, 20 յունիսի.

ՍԵՒ ՍԵՒ ԱՄՂԵՐ

Սև սև ամպեր ինձ պատում են՝
Արհաւիրք են խոստանում,
Հեղեղը շրջապատում է,
Ուր փախչեմ չեմ հասկանում:

Փայլակ, կայծակ ու որոտմունք,
Գոռիւն, գոչիւն է արձակում,
Բայց երկիրը այս ձայնի վրայ,
Պապանձում է ու սոսկում:

ԶԱՆԱԶԱՆ ԵՐԳԵՐ

ՀԵՂԻՆԱԿ. Գ. ՍԿԱՆԴԱՐԻ

Միւր Թիֆլիսը խարաք էլաւ,
էլ չինք տեսնում քէֆ ու գողը,
Խալիսը տաղու տարափ էլաւ,
Ջանը ննգաւ ահու—դողը:

էլ փունց գուրնի ձէնն ինք լսում,
էլ փունց դայրա—նաղարաւ.
էս էլ մէ պոլիտիկա է,
էնդուր մնացիլ ինք բեշարաւ:

Մազանդարիւրը դարդ ու վարամ,
Գուշայ բուշայ մանին գալի,
Հարսնիքները դառաւ հառամ,
էլ ոչովուն դուր չէ գալի:

Հէի գիզի, հէի ժամանակ,
Ո՞ւր է միւր ուրախութիւնը,

Մի տեղ չունեմ ես օթեւան,
Որ ազատուեմ հեղեղից,
Ոչ ոք չունեմ ես օգնական,
Եւ յոյս չունիմ մի տեղից:

Ամեն տեղից ես զրկուած եմ,
Ինձ բնութեան եմ յանձնել,
Երկու ջրի մէջ կանգնած եմ,
Զեմ գիտում ի՞նչ տեղ անցնել:

Դէպի հիւսիս...ինձ չէ գրաւում,
Դաժան ցուրտն բնութեան,
Միտքս հեռու է սլանում,
Գուցէ հասնեմ փրկութեան:

1907, Գ. Մ.

ԱՆԳՈՒԹ ՀԱՐՍՏԻՆ

Ես ուտում եմ սոխ ու հացը,
Իսկ դու պարոն չխրթմայ,
Բայց չես հարցնում խեղճի լացը,
Պար ես գալի արթուրմայ:

Ես միայնակ ման եմ գալի,
Պատառոտած շորերով,

Տեսնում ես, բարե չես տալի,
Այդ քո հպարտ պատկերով:

Խեղճ դրացիդ քաղցած, ծարաւ՝
Պատառ հացի կարօտ է,
Ինչու չես օգնում անիրաւ,
Քո սեղանից բան ուտեն:

Խեղճ եղբայրդ նեղացած է,
Նորա դարդը չես հարցնում,
Գուցէ ծարաւ կամ քաղցած է,
Ուշադրութիւն չես դարձնում:

Յաճախում ես թատրոն կլուբ,
Նարդի, պրոֆերանս խաղում...
Հարիւրներով փող ես տարւում...
Խեղճին կոպէկն ես խնայում:

Քեզ պէս մարդը հայոց համար,
Անօգուտ է անպիտան...
Միշտ կու ծաղրեմ ես անդադար,
Եւ չեմ լինիլ քո պաշտպան:

1908

ԳԼԽԻՍ ՄԱԶԵՐ ՍՊԻՏԵԿԵՑԱԻ

Գլխիս մազեր սպիտակեցաւ,
Սիրտս էնդուր չէ երգում,
Մազիս լարեր կտրատուեցաւ,
Սիրոյ նշոյլ չեմ ըզգում...

Ատամներս ողջ թափուեցաւ,
Ոչ ոք սիրով չէ նայում,
Սիրոյ արիւնս սառեցաւ,
Բայց ինձ ոչ ոք չէ խնայում:

Կեանքիս թերեր կտրատուում է,
Ինձ տանում են խոր գնդան,
Հոգիս մարմնից անջատուում է,
Հրաժեշտ տալով,—գերեզման...

1907

ՀԱՆԼԱՐՐԵՑԻ ԿԻՆՏՕ ԻՄ.

Հաւարրեցի կինսօ իմ,
Թաքնով խուրմայ իմ ծախում,
Քարումը, կշեռքումը,
Իս օջովուն չիմ խափում:

Ով ինչ կուզէ թող խօսին,
Գուրձս աչող է գնում,
Չիմ մոռում ասէ կօսին,
Իսկի անգաճ չիմ դնում:

Օր կայ շատ իմ աշխատում,
Շէն կենայ իմ մուշտարին,
Օր կայ որ քիչ իմ դադում,
Էս է իմ չար ու բարին:

Թանխէս մէջքիս քամարն է,
Էս է իմ աշխատանքը,
Իմ սիրածը Թամարն է...
Նրա համա է իմ կեանքը:

Ո՞վ ինչ գուզէ թող ասի,
Դիփ քէֆ, իխաիլաթումն իմ...
Օղոնդ թանխես չը պակսի,
Սիրեկնիս սոյբաթումն իմ...

Վախտ կայ շահմայ իմ ծախում,
Վախտ կայ, լիմոն, ապելսին,
Մարդ իմ յիշվում իս խալխում,
Ով ի՞նչ գուզին—թո՛ղ խօսին...

Գ. Ս.

1912, յունիսի 25

ՓՈՔՐԻԿ ՄՐՋԻՆՆ

Փոքրիկ մըջիւնն իր բոյն ունի,
Ազատ հանգիստ կեանք վարում,
Ոչ ոքից նա ճնշում չունի,
Իր գործն է լաւ կատարում:

Իսկ ես տարագիր ծնուած եմ,
Մի տեղ չունիմ բնակարան,
Ամեն կողմից ես զրկուած եմ,
Ոչ ոք չունիմ ինձ պաշտպան:

Մըջիւնն ինձանից լաւ է,
Նա ազատ չունչ է քաշում,

Բայց ինձ համար խիստ մեծ ցաւ է,
Անգութ բաղդն է ինձ մաշում...

Խաւարի մէջ դեզերում եմ,
Ապագան է իմ մեծ յոյս,
Արեւելքից ես սպասում եմ,
Գուցէ բացուի արշալոյս...

Այն օրն է իմ տօն ցնծութիւն,
Չեմ թափառի մերկ պանդուխտ,
Կու փարատուի իմ տխրութիւն,
Կը կատարուի իմ սուրբ ուխտ:

1907

ՈՂԲԱԼԻ ԵՐԳ.

Իմ սիրելի կնոջ Վարվարէ Հ. Սկանդարեանի
մահուան առթիւ, որ եղաւ 1907 թւին 28 մայիսի,
եւ թաղումն 31 ին, Համքարձման օրը:

Իմ զարուհը անցաւ տխուր և տրտնւմ,
Չը տւեց ինձի ցնծութեան նշան,
Կնոջ մահւանից, մորմոքւած սրտում,
Չըկայ ինձ համար խնդրութեան նշան.—

Քամբախտ մնացի, անի, վանի քաշելով,
Օրեր անցուցի, կեանքս մաշելով.
Գիշեր ու ցերեկ վարդին յիշելով,
Ոչ ոք չը տուեց փրկութեան նշան:

Վարդիս թերթերը շուտ թառամեցաւ,
Անպէտք բժիշկը ցաւն չիմացաւ...
«Ապերացիուն» նա չը դիմացաւ,
Վախճանեց թողեց՝ տխրութեան նշան:

Եօթ տարի խեղճ տանջուեց—չարչարուեց
Սուր նշտարներից էրուեց—խորովեց,
Յիմար «Կիմոնտից» հազիւ ազատուեց՝
Չը կարողացաւ տալ՝ փրկութեան նշան.—

Մայիս ամիսն վայ տալով գնաց՝
Սիրտս կսկիծով սևապատ մնաց.
Աշխարհն ինձ համար եղաւ տխրամած.
Մէ կողմից չունեմ օգնութեան նշան:

Մնացի սգաւոր թշուան, միայնակ.
Նստած լալիս եմ բուռի օրինակ.
Ի՞նչ կանեմ տան կարգ, օթեան - սենեակ.
Քանի որ չունեմ սէրութեան նշան:

Առանց Վարթիկիս, ի՞նչ է իմ կեանքը՝
Լաւ է հեռանալ զճուր է տանջանքս,

Կնամ սուրբ նշան Հաղպատի վանքը,
Մեղքս քաւելու՝ թողութեան նշան:

1907, 10 յունիսի.

ԵՍ ՄԻՆՁԵՒ ԵՐՐ ՊԻՏԻ ՄԱՆԳԱՄ

Ես մինչև երբ պիտի ման գամ,
Այսպէս թշուառ յուսահատ,
Չեմ հանդիպում գէթ մի անգամ,
Որ շունչ քաշեմ ես ազատ:

Գուգեմ ազատ ես շունչ քաշել,
Որպէս թռչուն բնութեան...
Եւ չեմ ուզում կեանքս մաշել,
Լինել ստրուկ գերութեան...

Ի՞նչ է իմ կեանք, միշտ վշտալի,
Սիրտ է տխուր քողարկուած...
Կամ մինչև երբ ես խղճալի,
Պէտք է մնամ միշտ ճնշուած...

Միշտ չի լինի մութ գիշերը,
Մէկ օր արև կը դուրս գայ,
Կանցնեն ինձանից վշտերը,
Երբ կը լսեմ «Փեսայն» գայ...

1886 ամի

ԻՄ ԴՈՂՈՅԻ ՎԵՐԱՅ *)

Ի՞նչ ես ուզում ինձանից,
Գէշ անիծուած դու սև դո՛ղ,
Օրամէջ չարչարում ես,
Մօտենում ես որպէս զո՛ղ:

Ի՞նչ ես գտել իմ մէջն,
Ինձանից ձեռք չես քաշում,
Ինձ շինել ես խաղալիք...
Մաղձ ես թափում ու մաշում...

Քանի վերմակ ծածկում եմ,
Մալմինս չէ տաքանում,
Դողացնում եմ ցուրտ եմ զգում,
Վերջն ջերմն է սաստկանում...

Ընդունում եմ խինինա,
Նա ինձ ոչինչ չի օգնում,
Եւ բժշկի խորհուրդը,
Բոլորովին չէ ազդում:

*) Իմ հիւանդութեան առթիւ հրաւիրեցի բժշկ Գ...ցին, որին փող չվճարեցի չհասկանալու համար:

Նորա այցելութիւնը,
Ուղիղն ասած դատարկ է
Նորա գրած դեղերը,
Ճիշտ եմ ասում անվարկ է...

Նորա գրած դեղերն են,
Խինին, պիլլա, միկստուրայ...
Նորա այցելութիւնը,
Հիւանդի մօտ իզո՛ւրա...

Որքան անգամ փորձեցի,
Նորա սարսաղ դեղերը...
Ոչինչ օգուտ չը տեսայ,
Իզուր կորցրի փողերը...

Ես համարձակ միշտ կասեմ,
Թիֆլիսում բժիշկ չըկայ,
Գուցէ հմուտ չեն գործին,
Կամ թէ չունեն պրակտիկայ:**))

1897 ամի, 10 յունիսի

ԻՄ ԱԶՆԻԻ ԲԱՐԵԿԱՄ Խ...ԻՆ

Խաբերայ աշխարհում, բարի աշխատիր,
Ականջ դիր խօսքիս ազնիւ բերեկամ,

*) Վերջը ինձ բժշկեց վաճառական հանգուցեալ Ի վան Պ. Ակորեանցը, Աստուած հոգին լուսաւոր է:

Լաւերին սիրիւր, վատերին ատիր...
Այս է իմ խնդիրքս միշտ և յարաժամ:

Եսականի հետ գործ մի ունենայ,
Մոռտիական է, նախապաշարուած,
Լուսաւորութեան միշտ կարօտ է նա,
Եւ խաւարի մէջն է խորասուզուած:

Չար մտքեր ունէ չարին հետեւում...
Նա կուռք մամոնին հոգով է սիրում,
Ուրիշի կայքը, խել է աշխատում,
Այդպիսով իրան միշտ փառաւորում...


Օ՛հ է հեռեկեք լուսաւոր դարին,
Եւ չը մոլորուենք խաւարի մէջն...
Սիրենք մարդկութիւն... ճշմարիտ բարին,
Որ ստրուկ չը մնանք մութ ստուերի մէջն:

Աշխատիր եղբայր և մի ճանճրանար,
Մնձն նուիրէ «մարդկութեան» համար...
Թէպէտ փշոտ է նորա ճանապարհ...
Միայն վեհ եղիր ազգութեան համար...

1878 ամին.



Այս գրքի վաճառում է Բաղրատ Առ-
նությունների „СВѢТЪ“ գրականության Георгіев-
ская ул. д. Арджеванидзе № 5.



24203

2013

